Մ. Ս. ՀԱՍՐԱԹՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Լրացավ ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, գիտության վաստակավոր գործիչ Մորուս (Մարգար) Ստեփանի Հասրաթյանի ծննդյան 70 տարին:

Մ. Հասրաթյանը ծնվել է 1902 թ. սեպտեմբերի 10-ին Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում, գյուղացու ընտանիքում: Ապրուստի միջոց հայթայթելու համար նրա եղբայրները ստիպված են լինում գնալ Բաքու և զբաղվել բանվորությամբ: 15-ամյա պատանի Մարգարը ևս նրանց հետ մեկնում է Բաքու՝ ուսանելու: 1918 թ. Մորուս Հասրաթյանը մասնակցում է Բաքվի և հատկապես Հյուսիսային Կովկասի ու Զանգեզուրի ֆաղաֆացիական կռիվներին:

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Հասրաթյանը Զանգեզուրի, Դիլիջանի գավառներում ու Երևանում 1921—1925 թթ. վարում է կոմերիտմիության պատասխանատու աշխատանքներ:

1922 թ. նա մշտապես տեղափոխվում է Երևան և ընդունվում Երևանի համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Սակայն Հասրաթյանին 2-րդ կուրսից, մոբիլիզացիոն կարգով, նորից գործուղում են Դիլիջանի գավառը՝ կոմերիտական ղեկավար աշխատանքի: 1925 թ. նա փոխադրվում է Երևան՝ ՀԼԿԵՄ Կենտկոմում աշխատելու: 1930 թ. Հասրաթյանը էքստերն կարգով ավարտում է համալսարանի պատմագրական ֆակուլտետը: Հետաքրքրությունը դեպի պատմությունը և գրականությունը Հասրաթյանի մեջ գնալով խորանում է: 1930—1932 թթ. նա իբրև ասպիրանտ սովորում է Լենինգրադում, հոչակավոր գիտնականներ Ն. Մարի և Հ. Օրբելու մոտ:

Վերադառնալով Երևան Մ. Հասրաթյանը անցնում է դասախոսական աշխատանքի համալսարանում, կոմհամալսարանում, մանկավարժական ինստիտուտում: Մինչև 1938 թ. սկիզբը նա եղել է Հայաստանի հեղափոխության բանգարանի դիրեկտոր, նյութական կուլտուրայի պատմության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ, Մատենադարանի դիրեկտոր: 1942 թ. Մ. Հասրաթյանը դիսերտացիա է պաշտպանում Սայաթ-Նովայի հայերեն երգերի մասին, ստանալով բանասիրական գիտությունների թեկնածուի աստիճան:

1943 թ. մինչև 1946 թ. Մ. Հասրաթյանը եղել է Հայկ. ՍՍՀ ԳԱ հասարակական գիտությունների բաժանմունքի գիտական քարտուղարը: Այնուհետև շուրջ տասը տարի նա աշխատել է պատմության ինստիտուտում, որպես ավագ գիտաշխատակից, Ս. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում, որպես դիրեկտորի տեղակալ ուսումնական մասի գծով, ամբիոնի վարիչ և դասախոս: 1964 թ. մինչև օրս Մ. Հասրաթյանը Հայաստանի պատմության պետական բանգարանի դիրեկտորն է:

Մ. Հասրաթյանն առաջիններից մեկն էր մեզանում, որ ձեռնարկեց հայ ժողովրդի սովետական շրջանի պատմության ուսումնասիրության գործը: Լինելով Հայաստանի հեղափոխության բանգարանի գիտական քարտուղար, ապա դիրեկտոր, նա հավաքեց և մշակման ենթարկեց հազարավոր փաստաթղթեր: Հասրաթյանի գրչին են պատկանում (հեղինակակցությամբ) Սուրեն Սպանդարյանի կյանքին և գործունեությանը վերաբերող փաստաթղթերի ստվարածավալ ժողովածուների երկու հատորները (հրատարակված 1926 և 1939 թթ.):

Զգալի ներդրում է հայ գրականագիտության բնագավառում Սայաթ-Նովայի վրացերեն և ադրբեջաներեն երգերի թարգմանության և ուսումնասիրության ուղղությամբ Հասրաթյանի կատարած շնորհակալ աշխատանքը, որը նոր լույս սփռեց հանճարեղ երգչի ստեղծագործության վրա:

Մեծ է Մ. Հասրաթյանի հետաքրքրությունների և հետազոտությունների շրջանակը. հնագիտությունից, հայ ժողովրդի հին ու միջին դարերի պատմությունից, բանասիրությունից մինչև հեղափոխական ու ազատագրական շարժումների և սովետական կարգերի հաստատման պատմությունը Հայաստանում: Իր սրտին մոտ ընդունելով երիտասարդ սերնդի դաստիարակության գործը և երկար տարիներ վարելով մանկավարժական-դասախոսական աշխատանք, Մ. Հասրաթյանը մեծ գործ է կատարել միջնակարգ դպրոցների հայ ժողովրդի պատմության ծրագրերի և դասագրքերի ստեղծման ասպարեզում: Վերևում ասվածին պետք է ավելացնել նաև բազմաթիվ գիտական ուսումնասիրությունների և ժողովածուների խմբագրական աշխատանքները, որ տարիներ շարունակ կատարել է նա:

Մ. Հասրաթյանի դասախոսությունները, գիտական հարցերին նվիրված ելույթները միշտ լսվել են մեծ հետաքրքրությամբ:

Հայրենիքը բարձր է գնահատել հորելյարի գիտա-մանկավարժական գործունեությունը. նա չորս անգամ (1945, 1954, 1963 և 1972 թթ.) արժանացել է Հայկ. ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության պատվոգրին, գիտության վաստակավոր գործչի կոչման (1967 թ.) և ընտրվել է Հայկ. ՍՍՀ ԳԱ թղթակից-անդամ (1963 թ.):

Վ. ՀԱԿՈԲՅԱՆ